Մարդու իրավունքների պաշտպանության դասընթացների նյութեր

23.11.2011 10:14

Հարգելի փաստաբաններ,

«Acojuris» և մի շարք այլ կազմակերպությունների կողմից իրականացվող «Փաստաբաններ փաստաբանների համար» ծրագրի շրջանակում մշակված մարդու իրավունքների և փաստաբանների իրավունքների պաշտպանությանը նվիրված վերապատրաստման փաթեթը վերջերս մեր գործընկերների կողմից տրամադրվել է Պալատին: Տրամադրված փաթեթը մատչելի է միայն էլեկտրոնային եղանակով և այն **անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն** լեզուներով է:

Վերապատրաստման փաթեթի նպատակն է ամրապնդել փաստաբանների հմտությունները ու կարողությունները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Փաթեթը բաղկացած է չորս բաժիններից: Դրանք են.

1. **Իրավական գործիքներ**. այս բաժնում զետեղված են միջազգային իրավական փաստաթղթերի (համընդհանուր և տարածաշրջանային) տեքստերը, որոնք առնչվում են մարդու իրավունքների պաշտպանությանը և դասակարգված են ըստ թեմաների:

2. **Ուսումնական ձեռնարկ**՝ մարդու իրավունքների և փաստաբանների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Այն բաղկացած է գործառնական կիրառություն ունեցող նյութերից:

3. **Վարժություններ**, որոնք նախատեսված են ձեռնարկի տեսական գիտելիքները գործնականում կիրառելու համար:

4. **Դիմումների ձևեր**. այս բաժնում զետեղված են մարդու իրավունքների պաշտպանության հարցերին առնչվող այն միջազգային ատյանների և մարմինների ձևաթղթերը, որոնք իրավասու են քննել անձանց անհատական գանգատները:

Այս գործիքներն ավելի դյուրին են դարձնում փաստաբանական գործունեության ամենօրյա կազմակերպումը, հստակեցնում են այն հիմնախնդիրները, որոնք կապված են մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր և տարածաշրջանային համակարգերի գործունեության հետ, ինչպես նաև խթանում են պաշտպանության այդ մեխանիզմների եւ գործիքների մատչելիությունը:

Այս փաթեթի բովանդակությանը և փաստաթղթերին ծանոթանալու համար կարող եք այցելել՝ http://www.observatoire-avocats.org/en/tools ինտերնետային կայքը:

Վերապատրաստման փաթեթի էլեկտրոնային տարբերակը կարող եք ստանալ Պալատից: Խնդրում ենք այդ նպատակով Պալատ այցելելու դեպքում Ձեր մոտ ունենալ էլեկտրոնային կրիչ (ֆլեշ):

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Պալատ հետևյալ հեռախոսահամարներով՝ 56-07-76 և/կամ պատասխան նամակ ուղարկել info@advocates.am էլ. հասցեին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })